ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 36-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով,40-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝

որոշում եմ.

1.Համայնքի զոհված զինծառայողների,զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման,պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով կազմել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.
1)Ռուզաննա Շահվերդյան - Աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի նախագահ,
2)Նորիկ Մկրտումյան -Քարինջ գյուղի վարչական ղեկավար, հանձնաժողովի նախագահի տեղակալ,
3)Արփինե Սիմոնյան -1-ին կարգի մասնագետ, հանձնաժողովի քարտուղար,
4)Վահե Մելքումյան - Համայնքի ղեկավարի օգնական, հանձնաժողովի անդամ,
5)Անուշ Ամիրջանյան -Գլխավոր մասնագետ-հաշվապահ, հանձնաժողովի անդամ,
6)Աստղիկ Էվոյան -1-ին կարգի մասնագետ, հանձնաժողովի անդամ,
7)Արեն Ստեփանյան -2-րդ կարգի մասնագետ, հանձնաժողովի անդամ:

2.Հանձնաժողովին՝ ստացված դիմումները քննարկել համայնքապետարանի աշխատակազմ դրանք մուտքագրվելուց հետո մեկամսյա ժամկետում, և հանձնաժողովի եզրակացությունը՝անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության մասին ներկայացնել համայնքի ղեկավարին:
3.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2020թ. հոկտեմբերի 5-ի <<Թումանյան համայնքի կամավոր խնդիրների լուծման իրականացման համար հանձնաժողով կազմելու մասին>> թիվ 99-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021թ. ապրիլի 19
ք.Թումանյան